# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5*

№ ԴԴ-3- Ն-522
« 10 » փետրվարի 2015թ.

**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի**
**շրջանակներում գրանցված մասնակիցներին**

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/3-2»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով ոչ ուշ քան 2015թ. փետրվարի 20-ը, ժամը 10:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Գ. Ղաղիվանյանը (հեռ. 010 511 788, 010 511 787 ):

Հայտերը կբացվեն 2015թ. փետրվարի 20-ին, ժամը 10:00-ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերումը:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար՝ գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի (որոնք կազմված են 31 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար: Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումն իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

***Միաժամանակ հայտնում ենք, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների հրավերի պահանջների համաձայն՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կնքման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:***

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ datgnumner@mail.ru:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ՝ ՌՈՏՍՈՒՆԻ ԱՍԻԿՅԱՆ**

Կատ՝. Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 511-788, 511-787